



“ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԹ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅԵՄԲԵՐ 1, 1900


ԹԻՒ 11

ՎԿԱՅՈՒԹԵԱՆ ՔԱՐԸ


Այս քարին կանգնուելուն վրայ գրուած է Ա. Թագ. Ի. 12 համարին մէջ: Իսրայելի որդիքը ըսած էին Սամուելի (համար 8), “Անդադար մեր Տէր Աստուծոյն ազազակէ մեզի համար, որ մեզ փղշտացուց ձեռքէն ազատէ:” Չպատմուիր թէ այդ ատեն կը գտնուէր իսրայելի մէջ մեծ հանճարեղ մարդ մը, բայց կար անձ մը որ աղօթքի մէջ զօրաւոր էր: Սամուէլ աղօթք ըրաւ, և Աստուած անոր աղօթքին պատասխանելով խաղաղութիւն պարգևեց իսրայելի: Բայց վտանգ կար որ ժողովուրդը մտնար Աստուծոյ բարութիւնը, և Սամուէլ զանիկա անոնց միտքերուն մէջ թարմ պահելու կերպ մը գտաւ: Քար մը առաւ, անտարակոյս մեծ քար մը, և ճամբուն մօտ կանգնեց զանիկա, այնպէս որ բոլոր անցորդները այն քարը տեսնելու կարող ըլլան, և անոր տուաւ Արեւնեղեր գեղեցիկ անունը, որ կը նշանակէ Օգնութեան քար:

Եթէ մենք ետ նայինք մեր կեանքերուն վրայ, միթէ չենք տեսներ Աստուծոյ մեզի ցուցած բարութիւններուն առատ ապացոյցները: Աստուած որչափ ողորմութիւններ և օրհնութիւններ շնորհած է մեզի, եւ ինչպէս յստակ կերպով ցուցած է իր անհուն սէրը դէպ ի մեզ՝ տալով իր միածին Որդին մեզի բարեկամ և փրկիչ ըլլալու:

Չմոռնանք անոր բարութիւնը: Եթէ



արտաքին յիշատակ մը չենք կանգնեց, մեր Արեւնեղերը կանգնեց մեր սիրտերուն մէջ: Ըսենք երախտագիտութիւնով, “Տէրը մինչև աս տեղ” մեզի օգնեց:”



ԶԳՈՒՇԱՅԻՐ ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔԷՆ  
Առաջին մեղքը սովորաբար պղտիկ կ'ըլլայ, բայց առաջին մեղքին մէջ կը պարունակուի բոլոր վտանգը: Պղտիկ գողը պատուհանէն ներս կը մտնէ, մեծ գողին համար կը բանայ ճամբան որպէս զի ներս մտնէ դռնէն: Ով որ երբեք չգործեր պղտիկ մեղք, երբեք

մեծ մեղք պիտի չգործէ: Ով որ պղտիկ մեղքեր կը գործէ, գրեթէ ըստոյգ է որ մեծեր ալ պիտի գործէ:

Նամակատան գրագիր մը ձերբակալուեցաւ ստակ գողնալուն համար ծրարներու մէջէ որ ամէն օր իր ձեռքը կու գային: Երբ խոստովանեցաւ իր ոճիրը, ըսաւ թէ շատ վարանելով և դժկամակութիւնով բացաւ առաջին նամակը՝ անոր մէջ ստակ փնտռելու համար: Բայց զայս ընելէն ետև ստակ պարունակող նամակ մը գրեթէ չէր անցներ ձեռքէն առանց քննուելու: Իր փորձառութիւնը շուտով կա-

րողացուց զինք հասկնալ թէ նամակներուն մէջ ստակ կը գտնուէր թէ ոչ, և թէպէտ պէտք ալ չունենար, գրեթէ չէր կրնար ձեռքերը արգիլել բանակէ նամակ մը, որուն մէջ կը կարծէր թէ ստակ կը գտնուի: Պզտիկ մեղքերէ մեծերու գնաց, մինչև որ վերջապէս քաղեց իր վարձքը — գըտնուիլ, խայտառակուիլ և պատժուիլ: Անոնք որ չեն ուզեր մինչև Սատանային ճամբուն ծայրը ճամբորդել, աղէկ կ'ընեն եթէ երբեք անոր մէջ չմտնեն, երբ անգամ մը ճամբան մտնեն, շատ դժուար է կայնիլ: Խորհուրդի մեղքերուն վերջը գործի մեղքեր են, և անոնք որ առաջին անգամ անջխաս կ'երևնան, մեծնալով կ'ըլլան ասուելի ճիւղեր: Ով որ մեղանշական կեանք կը սկսի, վտանգի մէջ կը գըտնուի: Իր մեղքերը կրնան պզտիկ և անջխաս երևնալ: Բայց այսպէս պզտիկ են նաև առիւծներն ու վագրերը և օձերը առաջին անգամ, և սակայն թէպէտ պզտիկ են, շատ արագ կը մեծնան, և շուտով պզտիկ մեղքերը մեծնալով կ'ըլլան վիթխարի և հակայ մեղքեր:


**ՏՂԻՆ ԳԱՐԵՂԷՆ ՀԱՅԵՐԸ**

Այն Հրեայ մայրը, երբ գարին կ'ազար, խմորը կը շաղուէր, փուռը կը տաքցընէր և իր աղին կուտար հինգ նկանակները որ ատեն անիկա այն դաշտային մեծ ժողովին պիտի երթար, չէր մտածեր թէ իր պզտիկ նկանակները նազովբեցի Մարգարէին ձեռքէն անցնելով պիտի կերակրէին հինգ հազար մարդիկը որոնք հաւաքուած էին լսելու անոր շնորհաձիր խօսքերը: Մենք ալ քիչ կը մտածենք երբ չնչին ծառայութիւն մը կ'ընենք, թէ Աստուած ի՞նչ մեծ օրհնութիւն կ'արտասանէ մեր ձեռքերուն աշխատութեան վրայ: Ի՞նչ պիտի պատմէր այն աղան իր մօրը երբ ժողովէն իր մօրը գնաց: Եւ ի՞նչ պատմութիւններ պիտի պատմուին մեզի երբ հասնինք յաւիտեանական բնակարանը և հասկնանք թէ մեր չնչին ծառայութիւնը, տկարութեամբ խօսուած մեր խօսքերը, վարդապետին անունով մեր ըրած փոքրիկ գործերը պատկուած են օրհնութիւններով որ պիտի մնան բոլոր

յաւիտենականութեան մէջ: Սրտանց կատարենք մեր գործերը Աստուծոյ համար, և աղօթենք որ ընդունի մեր ձեռքերուն աշխատութիւնները, և պսակէ զանոնք իր յաւիտենական օրհնութիւնով:

**ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒԻ ԳՈՒԼԷԾ Ի ՔԵՅՄՊՐԻՃ**

Օքսֆորտի և քէյմպրիճի Անգղիական երկու մեծ ակնածելի համալսարանները կը տարբերին Ամերիկեան և Գերմանական համալսարաններէն՝ սանկատուամով որ անոնք խել մը ուրոյն (զատ զատ) գոլէճներէ կը բաղկանան, որոնք ուսման միւսնոյն ճիւղերը



ամենէն առաջ շինուած գոլէճը 1287ին հիմնարկուեցաւ, Օքսֆորտի առաջին գոլէճին հիմնարկութենէն ութ տարի ետքը: Սբ. Յովհաննու գոլէճը հիմնեց Լէյտի Մարկարէթ, մայր Հենրիկոս ԺԲ-ի, որ 1483ին գահակալեց: Անիկա, գոլէճներէն շատին պէս, շինուած է քառանկիւն ձևով ընդարձակ բաց տեղի մը բոլորտիքը որ կը ծածկուի ծաղկոցներով շրջապատուած գեղեցիկ կանաչ մարգագետինով: Սբ. Յովհաննէս, երբ քէյմպրիճ այցելեցինք, ուրիշ ուէ գոլէճներու չափ գեղեցիկ երեցաւ մեզի: Անցեալ տարի Համալսարանի ուսանողներուն ամբողջ թիւը 3,019 էր որոնց 251ը Սբ. Յովհաննու գոլէճին կը վերաբերէին: Իսկ Օքսֆորտի ուսանողներուն ամբողջ թիւը քիչ մը աւելի, 3,402, էր:

**ՀՕՐԱՔՈՅՐ ՈՒԵԼԹՉԻՒ ԶԻԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ**

Լրագրի մը կին թղթակիցը հետեւեալ նշանաւոր դէպքը կը պատմէ ծերութեան մէջ ցուցուած կարողի և արագաշարժութեան վրայ, այնպիսի հասակի մը մէջ երբ այր և կին մարդիկ բոլորովին անկարող կը համարուին ատանկ բաներու: Գեղեցիկ հին տուն մը որ լեցուն էր ժառանգուած թանկագին կահ կարասիներով, մեծ ընտանիքի մը բնակարանն էր, որուն մէջ կը բնակէին այս պատմութիւնն ընողին մեծ մայրը և անոր երկու քոյրերը, «երեք ծերունի հրեշտակներ, ամէնքն ալ ութսուն տարեկանէ վեր:»

Օր մը երբ տան աւելի դեռահաս անդամները բացակայ կը գտնուէին, ծխնելոյցը բռնկեցաւ, և դիւրավառ տախտակներու վրայ կայծեր իյնալուն համար կը վախցուէր թէ չուտով պիտի բոցավառէր տան առաստաղը: Մեծ մայրը, երեք քոյրերուն պզտիկը, էր որ առաջին անգամ տեսաւ վտանգը, և թէպէտ խոշոր և ծանր մարմին մը ունէր, տանը ներսը վազեց իր տարիքին հակառակ արագութիւնով մը և «Կրակ կայ, կրակ կայ,» պոռաց: Տան մէջ գտնուող միակ էրիկ մարդն էր կէս անդամաւոր՝ եղբայր Լէյմէն, որ երբեք քալած չէր առանց նեցուկներու: «Ի՞նչ պիտի ընենք հիմա,» միաբերան աղաղակե-


կը սորվեցնեն և ամէն մէկը իր տնօրէն ժողովը ունի: Իւրաքանչիւր ուսանող այսպէս կը դաստիարակուի իր գոլէճին մէջ. և բոլոր ուսանողները մէկտեղ կը քննուին Համալսարանին քննիչ կաճառէն, և իրենց աստիճանները կ'ընդունին Համալսարանէն: Այսպէս Մր. Կլաստթըն Օքսֆորտի ընթացաւարտ էր և դաստիարակուեցաւ Քրայսթչըրչ գոլէճին մէջ: Թէնիսըն բանաստեղծը քէյմպրիճի ընթացաւարտ էր և Թրինիթի գոլէճին մէջ դաստիարակուեցաւ: Քէյմպրիճ 17 ուրոյն գոլէճներ ունի և Օքսֆորտ՝ 21: Քէյմպրիճի գոլէճներուն մէջ ամենէն մեծը Թրինիթի գոլէճն է, և յաջորդ մեծն է Սբ. Յովհաննու գոլէճը, որուն մէկ մասը կ'երևնայ հոս: Քէյմպրիճի

ցին երեքը: «Աղօթք ըրէք», ըսաւ բարի ծերուկը: «Ես բան չեմ կրնար ընել. ո՛հ, երանի՜ թէ ձի հեծնելու կարող ըլլայի»: «Ես կրնամ, եթէ դուն չես կրնար» գոչեց Հօրաքոյր Ուէլթհի, որ իննսուներորս տարեկան էր: Հօրաքոյր Ուէլթհի թեթեմ մարմին մը ունէր, և իննսուս տարեկանի մը համար զարմանալի էր իր արագաչար-ժուլիւնն ու գործունէութիւնը: Բարեբաղդապէս ախտոլին մէջ ձի մը թողուած էր: Եւ ծերունի տիկինը առանց սպասելու սանձը ձիին անցուց, կազ լէյմէնը ցատկըտելով ախտը մտաւ՝ ճիշդ ժամանակին անոր օգնելու համար համետը դնելու: «Ըսէք անոնց որ բոլոր դոյլերը և տաշտերը դուրս հանեն», ըսաւ պառաւ տիկինը, սև դուք ջրհանով ջուր քաշեցէք և լեցուցէք տաշտը և հոգ տարէք սանդուղներուն:» Եւ գնաց Հօրաքոյր Ուէլթհի, վարելով ձին այնպէս որ հիանար ազարակի այն մեծամարմին ծերուկ ձին մինչ կը վազէր քառասմբակ: Չարմանալի չէր որ մարդիկ խելագարած կարծեցին զանիկա երբ այսպէս տեսան որ անոր ճերմակցած մազերը հովէն ցրուած էին, և ինք կը թռչէր փողոցին մէջ սուրհանդակի նման և իր բոլոր ձայնով կը ճէր, «կրակ, կրակ»: Բլուրին վրայ գնաց և առաջին անգամ՝ պուռաց ճամբուն վրայ աշխատող մարդոց, և յետոյ՝ իր թոռանը աշխատութեան տեղը գիւղին մէջ: Այնուհետև, դարձնելով հիացած ծերուկ ձիուն գլուխը, այն նոյն արագութեամբ նորէն ետ դարձաւ վտանգին վայրը: Բայց երիտասարդներու արագ ոտքերը իրմէ առաջ հասած էին հոն, և կրակը սկսած էր մարել: Ծերունի տիկինը այս վաղքը, շատ արագ էր անկէ եօթանասուն տարի փոքր եղող կնոջ մը համար անգամ. և Հօրաքոյր Ուէլթհի իր տարիքին նախելով քաղաքին դիւցազնուհին եղաւ: Ան գրեթէ մինչև հարիւր տարի ապրեցաւ բարի ծերութիւն մը վայելելով այն աղուոր հին բնակարանին մէջ զոր բոցերէն ազատած էր, և մինչև վերջը երեք չէր դադարեցնել իր պարտութիւն մը զգալէ իր այն քաղազործութեան համար: Եւ կ'ըսէր.

«Ի՛նչ պիտի ըլլար եթէ ամէնքս նստէինք և միայն աղօթք ընէինք, ինչպէս եղբայր լէյմէն ըսաւ մեզի:»

ԳԱՆՊԱԿՈՒԱԾ ՍԻՒՆ ՄԸ

Բրիտանական թանգարանին մէջ հաւաքուած հին քանդակներուն մէջ կը գտնուի սիւնի կտոր մը որ եփեսոսի Արտեմիայ տաճարինն է, ոչ թէ այն տաճարինը որ կար Պօղոսի օրերը և յիշուած է Գործոց ԺԹ. գլխուն մէջ, այլ՝ անկէ առաջ գտնուող տաճարինը: Անիկա բոլորովին այրեցաւ այն գիշերը երբ Մեծն Ալեքսանդր ծնաւ, Ն. Ք. 356: Այլոշն էր երոստրատոս անունով մարդ մը, այդ կերպով իր անունը անմահացնելու համար: Հոս ներկայացուած սիւնը կտոր



Գրիտանեաներուս կը յիշեցնէ սէրն Անոր որ մեռաւ ոչ թէ իր բարեկամներուն համար, այլ իր թշնամիներուն համար, և զոր Հայր Աստուած յարուց մեռելներէն:

ՎԻՔՐՈՐԻԱ ԻՇԽԱՆՈՒՂԻՆ

Այն աղջիկը որ մէկ հատիկ է մանչեր ունեցող ընտանիքի մէջ, շատ անգամ կը շփանայ չափազանց սիրուելով և շողքորթուելով: Բայց ասիկա ճշմարիտ չէ Գերմանիոյ կայսեր դուստրին, փոքրիկ Վիքթորիա իշխանուհիին, համար: Արդէն վեց մանչեր կային երբ այս փոքրիկ աղջիկը Հոհենցոլլերնի Տունը բերուեցաւ, և փոքրիկ քրոջ մը գալուստը ուրախարար դէպք մըն էր: Բայց փոքրիկ իշխանուհին ոչ փառք գիտէ, ոչ պերճանք և ոչ անձնասիրութիւն: Առաւօտեան ժամը ճին, այսինքն կէս օրէն վեց ժամ առաջ, կ'ելլէ անկողնէն, այն ժամուն երբ կայսերական ընտանիքը կը ճաշէ, և իր սուցիչներուն հետ կ'ըլլայ: Կը մեծնայ Գերմանական պարզ կըթութութիւնով իր մօր խնամքին ներքև: Հօրէր՝ Պօլլը, երբ կը խօսի փոքրիկ իշխանուհիին վերայ, կայսեր սա մէկ խօսքը կը յիշէ, «Ես իմ ազգիս մարդոց համար աւելի լաւ բան չեմ կըրնար ուզել քան զայս որ Գերմանիոյ աղջիկները նմանին իրենց կայսրուհիին, և իրենց կեանքերը նուիրեն սա երեք բաներուն՝ մշակութեան, որ են՝ Եկեղեցի, Մանուկներ և Խոհանոց:»

կտոր եղած վիճակի մէջ գտնուեցաւ և կտորները ճարտարութեամբ իրար բերուեցան: Պատկերը կը կարծուի թէ Ալեքսանդրինն է, որ Հատէսէն, այսինքն հրաժարեալ հողիներու տեղէն, վեր եկած է, և թեաւոր պատկերը Մահը կը կարծուի: Դիցաբանական պատմութեան նայելով Ատմէթոս մահուանէ ազատուելու խոստում ընդունեց, սա պայմանով որ իր հայրը, մայրը կամ կինը մեռնի իրեն տեղը: Անոր կինը Ալեստիս ուրախութեամբ մեռաւ անոր տեղը: Բայց Հերքիլէս ազատեց զանիկա Սանդարամետաց(՝ Պղուտոն շաստուածին ձեռքէն: Հին դիցաբանութեան այս առասպելը

լաւ կրնայ հասկցուիլ թէ կին մը, որուն ուշադրութիւնը գրաւած են եկեղեցին, մանուկները և խոհանոցը, իր դուստրը պիտի կրթէ առտնին առաջնաքինութեան մէջ: Կայսրուհին խնամով կը հսկէ փոքրիկ իշխանուհիին թէ՛ մտքին թէ՛ մարմնին: Անոր խաղի ժամերը ուսման ժամերուն չափ կանոնաւոր կերպով կարգադրուած են: Անիկա շատ մը պարզ հաճոյքներ կը վայելէ: Իր եղբայրներուն հետ նաեւ նստած կը թխալարէ լճին վրայ, կը հեծնայ իր սիրուն մատաղաձիին (միտիլի) վրայ, զբօսավայրի անտառին մէջ խնճոյքներ կ'ունենայ, և երկար ատեն կը պտրտի իր մօր հետ գեղեցիկ գետիկներուն վրայ որ կը շրջապատեն փոցտամի պալատը:

(\*) Ստորերկրեայ աշխարհը ուր, հին հեթանոսները կը հաւատային թէ, հողիները կ'երթան

Վիքթորիա իշխանուհին սաստիկ սէր

ունի կենդանիներու: Շատ տեսակ սիրուն անասուններ ունի — շուներ, ճերմակ կատու մը, թռչուններ, ձուկեր, սկիւռներ և նապաստակներ — և իր ամէն օրուան գրօսանքն է գանձնք կերակրել բուն իր ձեռքերով: Անկա է հանդարտ, սիրելի և զգալուն փոքրիկ աղջիկ մը, քաղցր բնավորութեամբը շատ նման իր մօր:



ԵՐԿԻՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԳԵՑ

Ամերիկեան ներքին պատերազմին վերաբերեալ պատմութիւն մը հաճոյքով կը յիշէր բանակի մէջ աշխատող անձանթ հոգևոր պաշտօնեայ մը, որ ֆրիստուր քարոզից առանց խօսելու: Պաշտօնեան մօտեցաւ ճակատամարտի դաշտին վրայ վիրաւոր պառկած զինուորի մը, որ մահամերձ կը թուէր, և ըսաւ, «Կ'ողէ՞ք որ քիչ մը կարդամ Աստուածաշունչէն»: Բայց ինչ որ կարող եղաւ ըսել այն ծանրապէս վիրաւորած զինուորը, սա էր, «Շատ ծարաւ եմ, աւելի աղէկ է որ քիչ մը շուր տաք ինձի»: Աւետարանի պաշտօնեան իսկոյն շուրը բերաւ անոր. յետոյ երբ զինուորը իր գլխուն տակը դրուելու բան մը ուզեց, պաշտօնեան իր վերարկուն հանեց և ծալելով բարձի պէս դրաւ անոր գլխուն ներքեւ: «Երանի՛ թէ վրաս բան մը ձգուէր, շատ կը մտիմ»: միմիջեց զինուորը: Պաշտօնեան անմիջապէս իր երկրորդ վերարկուն հանեց և ձգեց վիրաւորեալին վրայ: Երբ զայս կ'ընէր պաշտօնեան, մահամերձ զինուորը վեր անոր երեսը նայեցաւ և ըսաւ, «Եթէ գիրքիդ մէջ կայ բան մը որ մարդու մը ընել կու տայ ուրիշին համար ինչ որ դուք ըրիք ինձի համար, կարդացէք և պիտի լսեմ»:»

ԿԻՐՔ ԵՂԵՆԻՆ ԻՆՉ ՕԳՈՒՑ ԿԱՅ

«Գուն կիրք ելլելով օգուտ պիտի տեսնեմ» ըսաւ ծերուկ մը տղի մը, որ գետնէն քար մը առնելով շան մը պիտի նետէր: Շունը միայն հաչած էր անոր վրայ խաղէ համար: «Այո», պատասխանեց տղան և շուտ մը նետեց քարը: Շունը կատղեցաւ և տղին վրայ նետուելով խածաւ անոր սրունքը, բայց քարը շանը դպչելու տեղ զնաց խանութի մը ապակիին զարնուելով կտորեց զանիկա: Խանութպանը դուրս վազեց և բռնելով տղան կտորած ապակիին ստակը վճարել տուաւ: Ահա այս օգուտը տեսաւ տղան իր ըրածէն:

Տղաք, խօսքիս մտիկ ըրէք, կիրք

ելլելով երբեք օգուտ քաղուած չէ, ոչ ալ պիտի քաղուի երբեք: Եթէ ձեր հանդարտ եղած ատենը բան մը ձեզի դժուար կու գայ, աւելի դժուար պիտի գայ երբ կիրք ելլէք: Եթէ կորուստ մը ունեցած էք, զանիկա պիտի աւելցնէք ձեր հանդարտութիւնը կորսնցնելով: Շատ անմտութիւն և յիմարութիւն է յանկարծակի կիրքի տեղի տալ: Անոր դէմ դրէք ձեր բոլոր սրտով: Զանացէք հանդարտ և խաղաղ կենալ ձեր պըզտիկ նեղութիւններուն մէջ, և երբ մեծ նեղութիւններ գան, աւելի կարող պիտի ըլլաք զանոնք կրելու:



ԵԶՆԱՐՇԱԽ

Եզնարչաւը, այսինքն եզներու քաւուածքով մրցումը, ամէն տարի կը կատարուի Գերմանիոյ գաւառներուն մէջ: Մայիսի սկիզբները տեղի կ'ունենայ տօնախմբութեան մը առթիւ: Մուտքը շատ աժան է, բայց պայմանները տարօրինակ են: Ամէն մէկ եզի վրայ իր տէրը պիտի նստի: Եզին կունակը պէտք է որ մերկ ըլլայ: Թոյլ չարուիր դործածել խարաղան, խթան, լուծ և նման ուէ բան կենդանին կառավարելու համար: Հեծեալը միմիայն իր ձայնը պիտի դործածէ նպատակին հասնելու համար: Եւ որովհետեւ եզները որոշ ճամբէ մը չեն երթար, այլ՝ ընդարձակ բաց դաշտէ, անասուններուն առած կրթութիւնը և հեծեալին հանճարը խստիւ փորձի կը դրուին: Այս արշաւին մէջ արագութիւնը այնքան կարևոր տեղ չգրաւեր, վասն զի այն հեծեալը որ կարող է իր եզը շիտակ գծի վրայ քալեցնել, վստահ է թէ յաղթող պիտի ելլէ: Եզնարչաւը կը սկսի մէկ քաւակուսի մըն դաշտի մը մէկ կողմէն և պէտք է լինայ դիմացի կողմը հասնելով: Երբ մրցակիցները կը շարունակ և նշանը կը տրուի, այն ատեն կը սկսի զուարճութիւնը: Հեծեալներուն ճիգերուն հակառակ եզներէն շատը չեն դիմեր դէպի դիմացի նշակը (նիշանկեան): Եւ որովհետեւ հանդիսատեսներուն թոյլ կը տրուի դաշտին մէջ մտնել, և ազատ են ընել ինչ որ ուզեն և արգիլել հեծեալը, թէպէտ առանց անոր դպչելու, արչաւը բաւական կը դժուարանայ լնդհանրապէս եզները զրգուող կենդանիներ չեն, բայց հանդիսատեսներուն աղաղակները և հեծեալներուն ճիգերը շուտով կատարեալ չփոթութեան մէջ կը ձգեն զանոնք: Շատ

անգամ կը պատահի որ ժամ մը կ'անցնի մինչև որ եզներէն մէկը դիմացի թելին տակէն անցնի: Բայց երբ անգամ մը արչաւը կատարուի այսպէս, յաղթական հեծեալը լիովին կը վարձատրուի իր կրած աշխատութիւններուն փոխարէն: Իր եզը տերէէ պըսակներով և ծաղիկներով կը զարդարուի, և անոր բարեբաղդ տէրը դրամական պզտիկ պարգև մը կը ստանայ իրբև մրցանակ: Բայց յաղթանակին բերած պատիւը մեծ բան է: Յաղթանակող հեծեալները կը յիշուին տարիներով, և յաճախ կը պատահի որ երբ գեղացի մը անցեալ դէպքի մը պիտի ակնարկէ, զանիկա կը յիշեցնէ մտիկ ընողին, ոչ թէ ըսելով թուականը երբ տեղի ունեցած է դէպքը, այլ ըսելով, «Այն տարին երբ այսինչ անձը եզնարչաւը շահեցաւ:»



ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՀԱՆՆԼՈՒԿԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ս ո շ ռ մ Ն  
 Ա Ե Ի ս ո լ Ա  
 Տ Ե Ը տ Ի ո Ս  
 Ա Ղ Ն Վ տ ո Ս  
 Ն Ը ո ս Ե Ը Ե  
 Ա Բ Բ Ե Բ Բ  
 Յ ո Վ Ի ո ղ Ա

Լուծեցին, Կ. Պոլիս. — Վահան ձ. Թովմասեան, Ե. Ս. Գարբէլեան, Նուարդ Հ. Բաշայեան, Յովսէփ Պարուծեան, Երուստի Կ. Սինանեան: Պրոսա. — Վարդուհի Ա. Այճեան, Յովհաննէս Կարապետեան: Բալթ. — Յովհաննէս Վարդանեան, Մանուէլ Կարեան, Յովհաննէս Տէր Ալեքսանեան, Ղազարոս Պետեան, Եղիազար Մերկեան, Աբրահամ Վարդանեան, Արմենակ Խոստիկեան: Կեսաբա. — Արտաշէս Զամպազեան, Կարին. — Սաթիկի Գրիգորեան, Եսթեր Լէֆֆինճեան, Թալատ. — Բարսեղ Տէր Բարսեղեան, Կիւրիան. — Մ. Ս. Խոսեթէմուրեան, Տէրապէթի. — Յովհաննէս Դ. Միւթէվէլեան: Սերտաբա. — Տէրան Յ. Պերպլերեան: Քեօհնէ. — Գրիգոր Գ. Դաւիթեան:



ՀԱՆՆԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

.....  
 .....  
 .....  
 .....  
 .....

1. Սպասարութեան վերաբերեալ բառ մը.
2. Գամակոսի գետերէն մին.
3. Հաւատքով կեն մը.
4. Երուստիմի պահպաններէն մին.
5. Թաղաւոր մը Յետուի ժամանակ:

Այս անունները պիտի գտնէք վերէն վար ալ կարդալով:  
 Թալատ ԲԱՐՍԵՂ ՏԵՐ ԲԱՐՍԵՂԵԱՆ

Տարեկան բաժանորդագին 6 դր. արծաթ, կանիիկ, ամէն տեղոյ համար:

Ամերիկայի Մեծիւսարաց Ընկերութեան կողմէն Արտօնատէր ձ. Բ. ԿԻՐԷՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
 Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՒ ՊՅՈՅՆԵԱՆ  
 Ֆինանսները Երգուշու, Ամերիկեան Խառ